ՀԱՆԳԻՍՏ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

(1877—1965)

Նոյեմբերին Մոսկվայում, 88 տարեկան հասակում, վախճանվեց արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1877 թվականին Ղափանի շրջանի Արցևանիկ գյուղում, քահանայի ընտանիքում։ Սովորել է Շուշիի թեմական դպրոցում և ապա, 1892 թվականին, ընդունվել Սևանի վանական դպրոցը։ Երկար տարիներ պաշտոնավարել է հայ եկեղեցիներում որպես տիրացու և 1920 թվականին քահանա է ձեռնադրվել Պիատիգորսկ քաղաքի Տ. Բագրատ արքեպիսկոպոս Վարդապետյանից։ Մինչև 1930 թվականը պաշտոնավարում է Պիատիգորսկում և ապա տեղափոխվում Մոսկվա, ուր քահանայագործում է մինչև խոր ծերություն։

Հանգուցյալը իր երկարամյա և արդյունավետ պաշտոնավարության համար պարգևատրվել է քահանայական լանջախաչով և ծաղկյա փիլոնով Գևորգ Զ Կաթողիկոսի կողմից։

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետից ստացել է ավագ քահանայություն։

Հայրենիքին մատուցած իր ծառայությունների համար արժանացել է «Մոսկվայի պաշտպանության համար» և մի շարք այլ մեդալների։

Հանգուցյալը բարի, ազնիվ, իր կոչման և աշխատանքին նվիրված, բոլորի կողմից սիրված և հարգված հոգևորական էր։

Հանգուցյալի վերջին օծումն ու թաղումը կատարվել է Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում, ձեռամբ Ռուսաստանի և



Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոսի, որն իր դամբանականի մեջ վեր է հանել հանգուցյալի կյանքի և գործունեության ուսանելի կողմերը։

Հանգի՛ստ նրա ոսկորներին։